ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 134

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Գետափնյա բնակավայր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Մասիս համայնքի (Գետափնյա բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

1. *ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Գետափնյա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք (Գետափնյա բնակավայր) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-030-0002-0051 կադաստրային ծածկագրով 0.17892 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	03-030-0002-0051 կադաստրային ծածկագրով 0.17892 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Գետափնյա բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Գետափնյա բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «25» «մայիսի» 2023 թ.